ՕՐԻՆԱԿ N 5/5

Բաղկացած է 9 թերթից (ներառյալ հավելվածը)

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀՀ Իրավաբանական անձանց
Պետական Ռեգիստրի գործակալության
Կենտրոնական մարմնի կողմից
Գրանցման ամսաթիվ «19» մայիսի 2010թ.
Գրանցման N 211.171.05370_____
Վկայական N_030 088432_____

ՀՀ Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության պետ՝
Ա. Գևորգյան

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ՄՌ ԱՍՈՑԻԱՑԻԱ» Մարդկային
ռեսուրսների կառավարման հասարակական
կազմակերպության Հիմնադիր Ժողովի՝
«12» մայիսի 2010թ. որոշմամբ:

Կազմակերպության նախագահ՝

_____

Արփի Կարապետյան

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 5 ՕՐԻՆԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՄՌ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ- 2010

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՄՌ Ասոցիացիա» մարդկային ռեսուրսների կառավարման հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարման, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ՀՀ սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին և սույն Կանոնադրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպությունն ունի հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, խորհրդանիշ, պաշտոնաթղթեր, հաշվարկային հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.5. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ **«ՄՌ Ասոցիացիա» Մարդկային Ռեսուրսների Կառավարման Հասարակական Կազմակերպություն**

Հայերեն կրճատ՝ **«ՄՌ Ասոցիացիա» ՀԿ**

Անգլերեն՝ “HR Association” Human Resources Management Non-Governmental Organization.

Անգլերեն կրճատ՝ “HR Association” NGO

Ռուսերեն՝ “HR Ассоциация” Общественная Организация Управления Человеческими Ресурсами.

Ռուսերեն կրճատ՝ “HR Ассоциация” ОО

1.6. Կազմակերպության խորհրդանիշն իրենից ներկայացնում է հետևյալը. անգլերեն տառերով գրված է HR Club ARMENIA, ընդ որում նշված արտահայտությունը գրված է կապույտ և նարնջագույն գունային համակցությամբ (Հավելված 1):

1.7.Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վարդանանց 14/1, բնակարան 29:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, մարդասիրությունը, հրապարակայնությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը:

Կազմակերպությունն այլ հասարակական կազմակերպությունների հետ իրավահավասար է:

2.2. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպչական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակներն ու ձևերը:

2.3. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

3.1.1. Պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

3.1.2. Պետությունը Կազմակերպությանն օգնություն և օժանդակություն է ցուցաբերում օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

3.1.3. Կազմակերպությունն իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, միջոցառումների և մրցույթների:

3.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

3.2.1. Կազմակերպությունն իր կանոնադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի համաձայն կարող է համագործակցել և անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր:

3.2.2. Կազմակերպությունն իր կանոնադրությանը համաձայն կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

4.1 Կազմակերպության Հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում մասնագիտական համայնքի ստեղծումն է, որը, աշխատելով ՀՀ-ում ՄՌ-կառավարման ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, կնպաստի ՄՌ-կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը՝ ժամանակակից համաշխարհային փորձի և ազգային առանձնահատկությունների համադրման միջոցով:
Հասարակական կազմակերպության նպատակը ենթադրում է նաև հետևյալ ենթանպատակների իրականացումը.

1. ՀՀ-ում և արտասահմանում ՄՌ-կառավարման ոլորտում դրական փորձի ուսումնասիրումը, վերլուծությունը, զարգացումն ու տարածումը,
2. ՀՀ-ում ՄՌ-կառավարման մասնագետների գործունեության ստանդարտների մշակումը, ներդրումը և զարգացումը,
3. ՀՀ-ում ՄՌ-կառավարման մասնագետների և ընդհանրապես կադրային ներուժի զարգացմանն ուղղված այնպիսի ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնք նպատակ ունեն զարգացնելու ՀՀ-ի տնտեսությունը:

Վերոհիշյալ նպատակային ուղղություններով Կազմակերպությունը որդեգրել է հետևյալ նպատակային դրույթների օրենքով սահմանված կարգով իրագործումը.

1. ՄՌ-կառավարման ոլորտին վերաբերող մրցույթների, կարիերայի օրերի, կոնֆերանսների, սեմինարների և ուսուցման ծրագրերի նախաձեռնումը, կազմակերպումը, իրականացումը, ինչպես նաև կազմակերպմանն աջակցումը,
2. Հանրապետական զբաղվածության կենտրոնների հետ համագործակցումը, աշխատաշուկայի ուսումնասիրումը, ինչպես նաև աշխատաշուկայի բարելավմանն ուղղված ազդեցության ձևերի և մեթոդների մշակումը,
3. ՀՀ-ում «Լավագույն Գործատու», «ՄՌ-Բրենդ» ամենամյա մրցույթների անցկացումը,
4. Ասոցիացիայի անդամների կարիերայի մոնիթորինգի, նրանց իրավական և սոցիալական պաշտպանության իրականացումը,
5. ՀՀ-ում ՄՌ-կառավարման ոլորտին առնչվող այլ նախաձեռնությունների իրականացումը:

4.2 Կազմակերպության գործունեության առարկան է՝

Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակները եւ խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով կարող է կազմակերպել եւ իրականացնել մասնագիտական խորհրդատվություններ, հետազոտություններ, կրթական գործունեություն, ուսուցում, դասընթացներ,

սեմինարներ, սոցիոլոգիական հարցումներ, կլոր սեղաններ, հանդիպումներ, քննարկումներ, միջոցառումներ, ցուցադրություններ, գովազդային գործունեություն, քարոզչություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

5.1.1. Համաժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է, որն իրավասու է լուծել կազմակերպության գործունեության հետ կապված ցանկացած հարց և իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը:

5.1.2. Կազմակերպության հերթական համաժողովը գումարվում է երկու տարին մեկ անգամ Կազմակերպության Խորհրդի կողմից: Խորհուրդը սահմանում է Համաժողովի հրավիրման կարգը, օրակարգը, օրը, ժամը, վայրը, որոնք Համաժողովի անցկացումից առնվազն 14 օր առաջ ծանուցվում են մասնակիցներին:

5.1.3. Կազմակերպության Համաժողովը իրավազոր է, եթե դրան մասնակցում են Կազմակերպության անդամների կամ Համաժողովի պատվիրակների առնվազն կեսից ավելին: Համաժողովն անցկացվում է ներկայացուցչական կամ անդամների ընդհանուր հավաքի ձևով, կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը պատկանում է այնտեղ որպես հեղինակ նշված անձին: Եթե Կազմակերպության անդամների թիվը անցնում է 50-ից, ապա Խորհրդի կողմից որոշված կարգով Համաժողովին կարող են մասնակցել Կազմակերպության անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

5.1.4. Կազմակերպության Համաժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելը, և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը,

բ) Կազմակերպության Խորհրդի անդամների և Նախագահի ընտրություններ կատարելը 2 տարի ժամկետով, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելը և նրանց կազմի փոփոխություններ կատարելը,

գ) Կազմակերպության գործունեության, գույքի օգտագործման, ղեկավար մարմինների հաշվետվություններ հաստատելը,

դ) Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներ ընդունելը:

5.1.5. Կազմակերպության Համաժողովի լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ մարմինների:

5.1.6. Արտահերթ Համաժողովը գումարվում է Կազմակերպության անդամների 1/3-ի պահանջով հերթական Համաժողովի գումարման համար սահմանված կարգով: Արտահերթ Համաժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Համաժողովի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

5.1.7. Կազմակերպության Համաժողովին մասնակցող յուրաքանչյուր մասնակից կամ պատվիրակ ունի մեկ ձայնի իրավունք:

5.1.8. Կազմակերպության Համաժողովում որոշումներն ընդունվում են Կազմակերպության անդամների կամ պատվիրակների թվի կեսից ավելի ձայներով:

5.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

5.2.1. Կազմակերպության Խորհուրդը Կազմակերպության գործադիր մարմինն է, որն ընտրվում է Համաժողովի կողմից 2 տարի ժամկետով: Այն հանդիսանում է Կազմակերպության ղեկավար մարմինը՝ հերթական համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում:

5.2.2. Կազմակերպության Խորհրդի քանակական կազմի որոշումը, անդամների ընտրությունն իրականացնում է Կազմակերպության Համաժողովը:

5.2.3. Կազմակերպության Խորհուրդը կոլեգիալ մարմին է, որն իր որոշումներն ընդունում է կոլեգիալ կարգով, Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

5.2.4. Կազմակերպության Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

5.2.5. Կազմակերպության Խորհուրդը ինքն է որոշում իր աշխատակարգը:

5.2.6. Կազմակերպության Խորհուրդն իր գործառույթներն իրականացնելու համար կարող է սահմանել պաշտոններ, ստեղծել կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բաժիններ, հանձնախմբեր, աշխատանքային խմբեր, սահմանել նրանց կանոնակարգերն ու աշխատակարգերը:

5.2.7. Կազմակերպության Խորհրդի յուրաքանչյուր անդամ օգտվում է մեկ ձայնի իրավունքից:

5.2.8. Կազմակերպության Խորհուրդը՝

ա) սահմանում է իր գործունեության կարգը,

բ) որոշում է կայացնում տնտեսական ընկերություններ հիմնադրելու կամ դրանց անդամակցելու վերաբերյալ,

գ) որոշում է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ հիմնադրելու և դրանք լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, աշխատանքային կանոնակարգերն ու ընթացակարգերը, հաստատում է դրանց աշխատանքի տարեկան հաշվետվությունները,

դ) կազմակերպության Նախագահին առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության հաստիքացուցակի ու դրույքաչափերի վերաբերյալ,

ե) որոշում է Համաժողովի հրավիրման կարգը, օրակարգը, տեղը, օրը և ժամը,

զ) որոշում է Կազմակերպությանն անդամագրվելու և անդամությունից դուրս գալու կարգը, անդամավճարների և մուտքավճարների չափերը և դրանց գանձման կարգը,

է) որոշումներ է կայացնում սույն Կանոնադրությամբ չսահմանված այն դեպքերում, որոնք չեն ամրագրված Կազմակերպության այլ ղեկավար մարմինների լիազորությունների շրջանակում:

5.3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

5.3.1. Կազմակերպության Նախագահին ընտրում է Կազմակերպության Համաժողովը՝ 2 տարի ժամկետով:

5.3.2. Կազմակերպության Նախագահը՝

ա) համակարգում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը,

բ) ապահովում է Համաժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

գ) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, պաշտոնական հանդիպումներում,

դ) Խորհրդի առաջարկությամբ հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակն ու դրույքաչափերը,

ե) Խորհրդի առաջարկությամբ կամ ինքնուրույն Կազմակերպության անունից կնքում է գործարքներ, պայմանագրեր, համաձայնագրեր և վավերացնում այլ փաստաթղթեր,

զ) համակարգում է Կազմակերպության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքը,

է) մասնակցում է Համաժողովի գումարումներին և Խորհրդի նիստերին՝ ունենալով մեկ ձայնի իրավունք,

ը) ստորագրում է Կազմակերպության Համաժողովի և Խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

թ) տալիս է լիազորագրեր,

ժ) հրավիրում է Խորհրդի արտահերթ նիստեր,

ժա) կարող է միջնորդել Խորհրդին՝ արտահերթ Համաժողով գումարելու համար,

ժբ) որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ բացառությամբ Համաժողովի և Խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերի: Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, ընդունում է որոշումներ,

ժգ) օրենքով, Կանոնադրությամբ և Խորհրդի կողմից սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության ցանկացած տեսակի ու չափերի գույքն ու միջոցները,

ժդ) Համաժողովին և Խորհրդին հաշվետվություն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ, հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և ներկայացնում իրավասու մարմիններին և կազմակերպություններին,

ժե) իրականացնում է սույն կանոնադրությամբ, Համաժողովի և Խորհրդի կողմից իր վրա դրված այլ լիազորություններ,

ժզ)իր լիազորությունների շրջանակում որոշումները կայացնում է միանձնյա:

5.4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

5.4.1. Կազմակերպության անդամ կարող են դառնալ 16 տարին լրացած այն ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր դիմում են ներկայացնում Կազմակերպությանը, միաժամանակ տալով իրենց համաձայնությունը՝ գործելու ՀՀ օրենքներին, սույն Կանոնադրությանը և Կազմակերպության գործունեության սկզբունքներին համապատասխան:

5.4.2. Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձինք Կազմակերպության Խորհրդին պետք է ներկայացնեն գրավոր դիմում: Տվյալ անձանց Կազմակերպությանն անդամագրելու հարցը լուծում է Կազմակերպության Խորհուրդը:

5.4.3. Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա: Կազմակերպության անդամակցությունը կարող է դադարեցվել նաև Կազմակերպությունից հեռացվելու միջոցով՝ Խորհրդի որոշման հիման վրա:

5.5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.5.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
ա) ընտրել և ընտրվել կազմակերպության ղեկավար մարմիններում,
բ) վճռական ձայնի իրավունքով մասնակցել Կազմակերպության Համաժողովին,
գ) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին,
դ) Կազմակերպության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել Կազմակերպության գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
ե) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,
զ) իրազեկ լինել Կազմակերպության գործունեությանը, ծանոթանալ Կազմակերպության մարմինների որոշումներին,
է) բողոքարկել Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները վերադաս մարմիններին,
ը) անարգել դուրս գալ Կազմակերպության շարքերից,
թ) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

5.5.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
ա) կատարել սույն կանոնադրության և ղեկավար մարմինների որոշումների պահանջները,
բ) նպաստել Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը,
գ) աջակցել Կազմակերպության գործունեությանը,
դ) մասնակցել Կազմակերպության աշխատանքներին և միջոցառումներին,
ե) բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը,
զ) մուծել անդամավճար,
է) կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ պար-տականություններ:

5.5.3. Սույն Կանոնադրությունը և Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները խախտելու, Կազմակերպության աշխատանքներին ակտիվորեն չմասնակցելու, Կազմակերպության հանդեպ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև անդամավճարը պարբերաբար չվճարելու դեպքում Կազմակերպության անդամները Խորհրդի որոշմամբ կարող են հեռացվել Կազմակերպությունից:

6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

6.1.1. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
բ) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,
գ) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
դ) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,
զ) ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին:
6.1.2. Օրենքով կարող են նախատեսվել Կազմակերպության նաև այլ իրավունքներ:

6.2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.2.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) ցանկացած ֆիզիկական անձի պահանջով ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան 7 օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,

բ) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

գ) վարել իր անդամների հաշվառումը,

դ) իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Համաժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

ե) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

է) Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ պետական լիազորված մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել Կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու Կազմակերպության Համաժողովին,

ը) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական լիազորված մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

թ) առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և/կամ Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և/կամ Կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

6.2.2. Օրենքով կարող են նախատեսվել Կազմակերպության նաև այլ պարտականություններ:

6.2.3. Անօրինական գործունեության համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1.Կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից:

7.2.Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:

Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության հիմնադիրներն ու անդամները Կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր անդամների և հիմնադիրների պարտավորությունների համար:

7. 3. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել իր հիմնադիրներին ու անդամներին:

8.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8.1.1.Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է Համաժողովի որոշմամբ: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

8.1.2.Կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

8.1.3.Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության:

8.1.4.Կազմակերպությանը կարող է (են) միանալ այլ կազմակերպություն (կազմակերպություններ):

8.1.5.Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:

8.1.6.Կազմակերպությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ):

8.1.7.Կազմակերպությունը կարող է կազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

8.1.8.Կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով նրանց կանոնադրությունների փոփոխությունները և(կամ) լրացումները կամ գործունեության դադարումը, ինչպես

նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

8.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.2.1. Կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարեցմանը՝ առանց իրավունքները եւ պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

8.2.2.Կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել Համաժողովի որոշմամբ՝ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար այն ստեղծվել է:

8.2.3.Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

8.2.4.Կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

8.2.5.Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

8.2.6.Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով: